POLICY ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	Cedars Sinai	**Գործուն ամսաթիվ՝** 01/01/2024 թ.

Title: Financial Assistance PolicyՖինանսական օգնության քաղաքականություն
Խորագիր՝ Ֆինանսական օգնության քաղաքականություն

Home Department: Patient Services
Վարչական բաժին՝ Հիվանդների ծառայություններ

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ՝
Այս փաստաթղթի պաշտոնական տարբերակը պարփակվել է Քաղաքականության և ընթացակարգի կառավարչում (PPM) և կարող է վերամշակված լինել փաստաթղթի տպագրումից հետո:

I. ՆՊԱՏԱԿ

a. Cedars-Sinai Medical Center-ը, Cedars-Sinai Marina del Rey Hospital-ը, Community Urgent Care Medical Group, Inc.-ի Cedars-Sinai Շտապ օգնության բաժնի բժիշկները, Cedars-Sinai ֆակուլտետի բժիշկները, ովքեր գործում են որպես Cedars-Sinai Medical Care Foundation-ի (CSMCF) կամ CSMCF-ի (միասնաբար, «Կազմակերպություն») հետ բացառիկ մասնագիտական ծառայությունների համաձայնություն ունեցող բժշկական խմբերի կողմից աշխատանքի ընդունված դասախոսական կազմ կամ բժիշկներ, հանձն են առել բավարարել համայնքում հիվանդների առողջական խնամքի կարիքները, հիմնվելով հետևյալ սկզբունքների վրա՝

   i. Վարվել բոլոր մարդկանց հետ անաչառ, արժանապատվությամբ, հարգանքով և կարեկցանքով.
   ii. Սպասարկել բոլորի արտակարգ իրավիճակի առողջական կարիքները, անկախ հիվանդի վճարելու կարողությունից. և
   iii. Օգնել հիվանդների, ովքեր չեն կարող մասնակի կամ լրիվ վճարել իրենց ստացած խնամքի համար:

b. Այս Քաղաքականությունը դրսևորում է Կազմակերպության հանձնառությունը մեր առաքելության, տեսիլքի և սկզբունքների նկատմամբ՝ օգնելով բավարարել կարիքները մեր համայնքում ցածր եկամտով ապահովագրությունից զուրկ ինչպես նաև թերապահովագրված հիվանդների: Այս հանձնառության իրագործման ծիրում, Կազմակերպությունը անվճար կամ զեղչված գնով բժշկականորեն անհրաժեշտ ծառայություններ է մատուցում հիվանդների, ովքեր որակավորվում են այս Քաղաքականության ներքո:

c. Այս Քաղաքականությունը ցուցումներ է տալիս նույնականացնելու հիվանդներին, ովքեր որակավորվում են ֆինանսական օգնության համար և հաստատում է ֆինանսական ստուգման չափանիշները՝ որոշելու, թե որ հիվանդներն են որակավորվում ֆինանսական օգնության համար:

II: ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

a. **Սահմանումներ:** Այս Քաղաքականության մեջ մեծատառով սկսվող տերմինները սահմանվում են այս Քաղաքականության «Սահմանումներ» բաժնում կամ երբ օգտագործվում են առաջին անգամ:

b. **Ծածկված այս Քաղաքականության ներքո:** Միայն ուղղակի Կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունները կծածկվեն այս Քաղաքականությամբ:

c. **Այս Քաղաքականությամբ չծածկված հաստատություններ, բժիշկներ և այլ մատակարարներ կարող են ունենալ առանձին Ֆինանսական օգնության քաղաքականություններ:** Կազմակերպության Բժշկական անձնակազմի (այսինքն՝ Կազմակերպությանը մաս չկազմող մատակարարների) համայնքային անդամները նույնպես կարող են իրենց հիվանդներին հասանելի դարձնել ֆինանսական օգնություն: Կազմակերպությունը իր կայքում տրամադրելի կդարձնի այդ բժիշկների վերաբերյալ իր ունեցած տեղեկությունների ցանկը, նշելով՝ արդյո՞ք որոշակի բժիշկներ (կամ նրանց բժշկական խումբը)՝ (i) կտրամադրեն համազոր զեղչեր բժշկի մասնագիտական վճարներից ցածր եկամուտ ունեցող չապահովագրված հիվանդներին, ինչպես Կազմակերպությունը մատուցում է՝ հիմնվելով Քաղաքականության մեջ սահմանված չափանիշների վրա. (ii) կընդունեն Կազմակերպության կողմից ֆինանսական օգնություն ստանալու համար հիվանդի իրավասության որոշումը. եւ (iii) կենթարկվեն բոլոր կիրառելի դաշնային, նահանգային եւ տեղական օրենքներին, կանոններին, հրամանագրերին եւ հրամաններին, ինչ վերաբերում է սպառողների պարտքերի հաշիվների գանձման: Կազմակերպությունը պատասխանատու չի լինի այդպիսի բժիշկների կողմից ֆինանսական օգնության ծրագրերի վարման կամ նրանց հաշվարկային գործելակերպերի համար:

d. **Օգնություն ձեր հաշվագրի վճարման համար - Իրավասության չափանիշներ**

   i. **Ֆինանսական օգնություն**: Ֆինանսական օգնություն տրամադրելի կդարձվի այն հիվանդներին, որոնց եկամուտն ու դրամական ունեցվածքը ցածր է ընթացիկ տարվա Աղքատության դաշնային մակարդակի (FPL) 400%-ից կամ հավասար է դրան: Հիվանդներ, որոնց եկամուտը տատանվում է FPL-ի 401%-600%-ի սահմաններում, նույնպես որակավորվում են զեղչով խնամքի համար: Թեև ունեցվածքները ներառվում են ֆինանսական օգնության դիմումի մեջ («Դիմում»), դրանք նկատի չեն առնվի զեղչերի համար իրավասությունը վճռելիս: Բ Կցորդը սահմանում է Կազմակերպության կողմից տրամադրելի ֆինանսական օգնության սահմանները:

   ii. **Նախածառայողական հիվանդներ (ընտրովի/ոչ արտակարգ իրավիճակի խնամք):** Այն հիվանդները, ովքեր հերթադրված են որպես ընտրովի ստացիոնար հիվանդներ կամ որպես ոչ-արտակարգ իրավիճակի ամբուլատոր հիվանդներ, ֆինանսական օգնության համար պետք ունեն նախօրոք վավերացման Փոխնախագահի, Ֆինանսների և գլխավոր եկամտի պարբերաշրջանի պաշտոնյայի

կամ նրանց նշանակած անձի կողմից: Միայն բժշկականորեն անհրաժեշտ բուժգործողություններն են իրավասու վավերացման համար: Ընտրովի բուժգործողությունների և դուրս գրվելուց հետո հետևման խնամքի համար ֆինանսական օգնությունը սահմանափակվում է այն հիվանդներով, ովքեր ապրում են Կազմակերպության սպասարկման տարածքում կամ այլապես վավերացված են Փոխնախագահի, Ֆինանսների և գլխավոր եկամտի պարբերաշրջանի պաշտոնյայի կամ նրանց նշանակած անձի կողմից: Կազմակերպությունը հեռանկարային կերպով վերապահում է հիվանդի համար առաջարկված ոչ-արտակարգ իրավիճակային և այլ ոչ-բժշկականորեն անհրաժեշտ խնամքի կապակցությամբ ֆինանսական օգնություն չտրամադրելու իրավունքը՝ հիմնվելով Կազմակերպության կողմից իր ֆինանսական և կլինիկական աղբյուրները խոհեմորեն հատկացնելու անհրաժեշտության վրա:

iii. **Հավելյալ ֆինանսական աղբյուրներ և հիվանդից պահանջվող համագործակցություն:** Այս քաղաքականության ներքո օգնություն ստանալու համար վավերացված հիվանդները համաձայնում են շարունակաբար համագործակցել այն գործընթացում, որն անհրաժեշտ է Կազմակերպության ծառայությունների դիմաց փոխհատուցում ստանալու համար երրորդ կողմի աղբյուրներից, ինչպես՝ California Victims of Crime-ի հիմնադրամները, County Trauma Program-ը, Medi-Cal ծրագիրը եւ այն առողջապահական ծրագրերը, որոնք ծածկույթ են առաջարկում Կալիֆորնիայի առողջապահական նպաստների առքուվաճառքի շուկայի (California Health Benefit Exchange) («Շուկա») միջոցով: Հիվանդի՝ իր առողջական խնամքի ծախսերի համար երրորդ կողմի ծածկույթի դիմումը չպետք է խափանի օգնության համար իրավասությունը այս Քաղաքականության ներքո: Որպես ֆինանսական օգնության պայման, հիվանդը պետք է դիմի ծածկույթի Medi-Cal-ի, Healthy Families-ի և County Trauma Program-ի ներքո՝ ըստ կիրառելիության, ինչպես նաև ծածկույթի՝ Շուկայի ներքո, երբ դա պատշաճ է: Վերը նշվածը տարածվում է նաև նահանգից դուրս բնակվող հիվանդների և իրենց նահանգում Medicaid-ի համար նրանց կատարած դիմումի վրա:

Կազմակերպությունը համապատասխան ուղղորդումներ կկատարի տեղական վարչաշրջանի գործակալությունների համար, ներառյալ՝ Healthy Families, Covered California, Medi-Cal կամ այլ ծրագրերը, հավանական իրավասությունը վճռելու համար:

Կազմակերպությունը իրավասու կլինի հաշվագիր ներկայացնելու հիվանդին ծածկույթ տրամադրող որևէ երրորդ կողմի ապահովագրողի, ներառյալ՝ երրորդ կողմի պատասխանատվության որևէ աղբյուրի: Առողջական ապահովագրողներին և առողջապահական ծրագրերին արգելվում է նվազեցնել Կազմակերպության

ներկայացվող պահանջի փոխհատուցումը, նույնիսկ եթե Կազմակերպությունն ըստ այս Քաղաքականության հրաժարվել է հիվանդի հաշվագրի ամբողջությունից կամ մի մասից:

iv. **Ինքնավճարով հիվանդներ:** Կազմակերպությունը իր պատմական փորձառության եւ ընթացիկ ապահովագրական միջավայրի վրա հիմնվելով ենթադրել է, որ ապահովագրություն չունեցող հիվանդները ի վիճակի չեն ապահովագրություն ստանալու: Կազմակերպությունը ենթադրում է, որ այդ հիվանդները իրավասու են ֆինանսական օգնության ծրագրերի եւ այդ բոլոր հիվանդներին տրամադրելի կդարձնի հետևյալ օգնությունը, եթե հիվանդը այլ միջոցներ չձեռնարկի Կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների համար: Ձեղչված գումարը, որի համար հաշվագիր չի ուղարկվում հիվանդին, չփոխհատուցված խնամք է, որը Կազմակերպության կողմից կհաղորդվի Medicare-ի և Medicaid-ի ծառայությունների կենտրոնների (Centers for Medicare & Medicaid Services) Մատակարարների փոխհատուցման ձեռնարկի (Provider Reimbursement Manual) 15-2 գլխի 4012 բաժնի ցուցումների համաձայն:

1. Ինքնավճարով հիվանդներն ինքնաբերաբար հաշվագիր կստանան զեղչված գումարով, որը որոշվում է բազմապատկելով ընդհանուր ծախսերը Կազմակերպության Ընդհանրապես հաշվագրված գումարների (AGB) տոկոսով՝ կիրառելի ստացիոնար ծառայությունների, շտապ օգնության սենյակի ծառայությունների կամ ամբուլատոր, ոչ-արտակարգ իրավիճակային ծառայությունների համար:

2. Ինքնավճարով հիվանդներն այս զեղչերի համար իրավասու են առանց Դիմումի ներկայացման: Ֆինանսական օգնությունը չի տարածվում ընտրովի բուժգործողությունների վրա, եթե որոշակի կարգադրություն չի արվել Կազմակերպության և հիվանդի միջև:

v. **Բժշկականորեն կարիքավոր հիվանդներ (Այլապես զեղչի համար իրավասու չեղողներ):** Այն հիվանդները, ովքեր կարիքավոր են, բայց այլապես իրավասու չեն ֆինանսական օգնության համար այս Քաղաքականության ներքո, այնուամենայնիվ կարող են ֆինանսական օգնություն խնդրել այս Քաղաքականության մեջ սահմանված գործընթացի համաձայն: Բժշկական կարիքի պատճառով ֆինանսական օգնության խնդրանքը պետք է վավերացվի Փոխնախագահի, Ֆինանսների և գլխավոր եկամտի պարբերաշրջանի պաշտոնյայի կամ նրանց նշանակած անձի կողմից, իրենց հայեցողությամբ:

e. **Ֆինանսական օգնության վարչություն:** Կազմակերպությունը ֆինանսական օգնության համար օգտագործում է հիվանդի մեկ, միասնական Դիմում: Այս գործընթացը նախատեսված է յուրաքանչյուր դիմողի հնարավորություն ընձեռելու, որպեսզի ստանա առավելագույն ֆինանսական օգնության նպաստ, որի համար կարող է որակավորվել: Ֆինանսական օգնության դիմող բոլոր հիվանդներից կխնդրվի լրացնել մի Դիմում:

i. **Ինչպես դիմել:** Դիմումի գործընթացը հիվանդի կամ Կազմակերպության անձնակազմի որևէ անդամի կողմից կարող է նախաձեռնվել շփվելով Հիվանդների ֆինանսական պաշտպանների (Patient Financial Advocates) հետ 310-423-5071 համարով կամ էլ. փոստ ուղարկելով patient.billing@cshs.org հասցեով: Այս գործընթացը ներառում է հետևյալը՝

1. Հիվանդներին տրվում է մի Դիմում, Medi-Cal-ի Դիմում և վարկային խորհրդատվության մասին տեղեկություն:

2. Դիմողներին ձևերի լրացման համար օգնություն է առաջարկվում Cedars-Sinai South Tower-ի փողոցի մակարդակի 1740 սենյակում, Հիվանդների ֆինանսական պաշտպանների կողմից:

3. Դիմումը կարող է լրացվել բերանացի՝ Կազմակերպության անձնակազմի օգնությամբ, բայց այնուամենայնիվ հիվանդից կամ ներկայացուցչից պահանջվում է ստորագրել Դիմումը:

ii. **Դիմումի վերանայում**

1. **Որոշում:** Իրավասության ուղեցույցները հաշվարկվում են որպես իրավասության չափ ընթացիկ FPL-ի օգտագործումով:

2. **Որոշումներ մասնաճյուղերի և վավերացված համայնքային գործընկերների կողմից:** Այն հիվանդները, որոնց ֆինանսական օգնության դիմումները վավերացվել էին վերջերս որոշակի մասնաճյուղերի կամ Համայնքային գործընկերների կողմից, կարող են Կազմակերպության կողմից վավերացվել արագացված հիմունքով, Կազմակերպության հայեցողությամբ: Կազմակերպությունը ֆինանսական օգնության համար դիմող հիվանդներին խորհուրդ կտա, եթե այդպիսի արագացված վավերացումը տրամադրելի է:

3. **Ունեցվածքներ:** Իրավասությունը որոշելու գործում ունեցվածքների նկատառումը սահմանափակվում է այս Քաղաքականության մեջ նշված սահմանումով:

4. **Եկամուտ:** Մասնակի ժամանակամիջոցների համար աշխատաթերթերում պետք է ներառվեն տարեկան հաշվարկի բերված տվյալների օգտագործումով:

5. **Հանուրդներ:** Այլ ֆինանսական պարտավորություններ, ներառյալ՝ ապրուստի ծախսերն ու տրամաբանական և անհրաժեշտ բնույթի այլ առարկաներ, նկատի կառնվեն:

6. **Հիվանդի գրպանից վճարվող առավելագույն ծախսը**: Այս Քաղաքականությամբ ծածկված ծառայությունների համար հիվանդի կողմից որևէ վճարում կսահմանափակվի առավելագույնը Ընդհանրապես հաշվագրված գումարով (AGB):

7. **Վերագնահատում:** Իրավասությունը Կազմակերպության կողմից կարող է վերագնահատվել, եթե տեղի է ունենում հետևյալներից որևէ մեկը՝

   a. Հիվանդի եկամտի փոփոխություններ:

   b. Հիվանդի ընտանիքի չափի փոփոխություններ:

   c. Որոշում է կայացվում, որ ֆինանսական օգնության Դիմումի որևէ մաս կեղծ կամ մոլորեցնող է, որի դեպքում սկզբնական ֆինանսական օգնությունը կարող է հետադարձ կերպով մերժվել:

iii. **Պահանջվող փաստաթղթերի ներկայացումը:** Ֆինանսական օգնության համար դիմող հիվանդներից Կազմակերպությունը պահանջում է զանազան փաստաթղթեր, որպեսզի հիմնավորի նրանց իրավասությունը: Փաստաթղթերը կարող են ներառել, առանց դրանցով սահմանափակվելու, հետևյալները՝

1. Լրացված Դիմում:

2. Եկամտային փաստաթղթերը կարող են ներառել՝
   a. Ընթացիկ ժամանակամիջոցի աշխատավարձային վճարագրի կտրոն:
   b. Նախորդ տարվա հարկագիր:
   c. Գրավոր բացատրություն:

3. Ունեցվածքի փաստաթղթերը կարող են ներառել՝
    a. Նախորդ ամսվա բանկային հաշվի քաղվածքի պատճենները (բոլոր էջերը):
    b. Փողի շուկայի հաշվի հաշվետվություններ:
    c. Բաժնետոմսեր:
    d. Պարտատոմսեր:
    e. Ավանդների վկայագրեր:
    f. Միջնորդավճարային հաշիվներ (բացառում է փաստաթղթերը, որոնք վերաբերում են կենսաթոշակային ծրագրերի, տարկետված հատուցման ծրագրերի (և՛ որակավորված, և՛ չորակավորված՝ Ներքին եկամտի ծառայության (Internal Revenue Service, IRS) օրենսգրքի ներքո):
    g. Գործազրկության, Սոցիալական ապահովության նպաստների կամ Հաշմանդամության նպաստների կտրոն:

iv. **Լրացված Դիմումի ներկայացումը:** Եթե հիվանդը լրացված Դիմում է ներկայացնում Դիմումի ժամանակամիջոցի ընթացքում, Կազմակերպությունը պարտավոր կլինի՝

1. Անմիջապես ձեռնարկել բոլոր տրամաբանորեն առկա միջոցները, որպեսզի կասեցնի կամ շրջի խնամքի համար վճարում ձեռք բերելու նպատակով հիվանդի դեմ ձեռնարկված որևէ Արտակարգ գանձման գործողություն (ECA): Ընդհանուր առմամբ նման առկա միջոցները ներառում են, առանց դրանցով սահմանափակվելու, խորհրդատվություն՝ գանձման գործակալություններին, որպեսզի դադարեցնեն գանձման գործունեությունները, միջոցներ՝ հիվանդի դեմ որևէ դատավճիռ մերժելու, վերացում՝ հիվանդի գույքի վրա որևէ տուրքի կամ կալանադրման և հիվանդի վարկային հաշվետվությունից հեռացում որևէ բացասական տեղեկության, որը հաղորդվել էր սպառողների հաշվետվության գործակալությանը կամ վարկային գրասենյակին:

2. Որոշում կայացնել իրավասության վերաբերյալ կամ պարզել՝ արդյո՞ք Դիմումը պակասավոր է կամ պահանջում է հավելյալ տեղեկություններ, տրամաբանական ժամկետում:

3. Անհապաղ գրավոր տեղեկացնել հիվանդին իրավասության որոշման մասին, ներառյալ՝ եթե կիրառելի է՝ օգնությունը, որի համար հիվանդն իրավասու է և թե ինչն է որոշման հիմքը:

4. Եթե հիվանդն իրավասու է ֆինանսական օգնության համար, ապա Կազմակերպությունը պետք է գրավոր ծանուցի իրավասության, տրամադրելի օգնության, որոշման հիմքի և ծառայության ծածկված ամսաթվերի մասին:

    a. Եթե չկա հիվանդի պատասխանատվություն, ապա ոչ մի հավելյալ քայլ չի պահանջվում՝ բացի վերադարձնելուց վճարված գումարները, ինչպես սահմանվել է այս Քաղաքականության «Հատուցումներ» բաժնում: Եթե կա մնացորդային հաշվեկշիռ, ապա Կազմակերպությունը պետք է նաև հիվանդին գրավոր հայտնի խնամքի համար հիվանդի պարտական գումարը և նկարագրի, թե ինչպես հիվանդը կարող է ձեռք բերել հաշվի մասին հավելյալ տեղեկություն:

    b. Հիվանդը ֆինանսական օգնության համար վավերացվելուց հետո, հիվանդից հավելյալ գանձում չի կատարվի արտակարգ իրավիճակի կամ այլ բժշկականորեն անհրաժեշտ խնամքի համար՝ բացի AGB-ից:

    c. Իրավասության վավերացումները կարող են կատարվել միայն անհատների կողմից, որոնք հատկապես լիազորվել են Կազմակերպության կողմից: Այս անհատը ներկայումս է Փոխնախագահը, Ֆինանսների և գլխավոր եկամտի պարբերաշրջանի պաշտոնյան կամ նրանց նշանակած անձը:

v. **Վճռի նամակ:** Հիվանդի կողմից լրացված դիմումն ու պահանջված փաստաթղթերը ներկայացվելուց հետո, Կազմակերպությունը նամակ կուղարկի, նշելու համար վավերացման կամ անհրավասության վճիռը: Նամակը կներառի հետևյալները՝

1. Հստակ հաշվետվություն ֆինանսական օգնության համար հիվանդի իրավասության վճռի վերաբերյալ:

2. Եթե հիվանդն անհրավասու էր ֆինանսական օգնության համար, հաստակ հաշվետվություն, թէ ինչու հիվանդի դիմումը մերժվել է:

3. Եթե հիվանդն անհրավասու էր որևէ ծառայության պատճառով, որը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ չէր,, ապա ծառայության բուժող բժիշկը դա կհաստատի մերժման համար:

4. Եթե հիվանդի դիմումը վավերացվել էր ֆինանսական օգնության համար՝ հստակ բացատրություն նվազեցված հաշվի համար և հրահանգներ այն

մասին, թե ինչպես հիվանդը կարող է հավելյալ տեղեկություն ձեռք բերել ողջամիտ վճարման ծրագրի վերաբերյալ, եթե կիրառելի է:

5. Կազմակերպության կոնտակտային տվյալները, ներառյալ՝ բաժինը, կոնտակտային անունը և այն, թե հիվանդը որտեղ կարող է բողոքարկել հիվանդանոցի որոշումը:

6. Տեղեկություն Առողջապահության հասանելիության և տեղեկատվության բաժնի (Department of Health Care Access and Information, HCAI) Հիվանդանոցի հաշվագրերի գանգատի ծրագրի (Hospital Bill Complaint Program) մասին:

7. Տեղեկություն Առողջապահության սպառողների դաշինքի (Health Consumer Alliance) մասին:

vi. **Դիմումի համար սահմանափակ տեղեկություններով հիվանդներ:** Կազմակերպության տրամադրելի՝ հիվանդին վերաբերող ֆինանսական տվյալների բացակայությունը չի խափանի ֆինանսական օգնության համար իրավասությունը: Հիվանդի կլինիկական, անձնական և ժողովրդագրական վիճակին վերաբերող բոլոր գործոններն ու այլընտրանքային փաստաթղթերը (ներառյալ՝ տեղեկությունները, որոնք կարող են տրամադրվել այլ բարեսիրական կազմակերպությունների կողմից) գնահատելիս, Կազմակերպությունը կարող է հիվանդի եկամտի վերաբերյալ տրամաբանական ենթադրություններ անելով որոշել, որ հիվանդը իրավասու է ֆինանսական օգնության համար:

vii. **Պակասավոր Դիմում:** Եթե հիվանդը ներկայացնում է պակասավոր Դիմում, ապա Կազմակերպությունն անհապաղ հիվանդին պետք է տա գրավոր ծանուցում, որը նկարագրում է հավելյալ տեղեկությունները և/կամ փաստաթղթերը, որոնք պահանջվում են Դիմումի համար, և ներառի Դիմումն ընթացքի մեջ դնելու համար շփման վերաբերյալ տվյալներ: Եթե արդյունքում հիվանդը պահանջվող տեղեկություններով Դիմումի ժամանակամիջոցի ընթացքում (կամ Կազմակերպության կողմից որոշված այդպիսի ավելի երկար ժամանակում) լրացնի Դիմումը, ապա Դիմումը կհամարվի ամբողջական:

viii. **Պակասավոր Դիմումի ամբողջացում**: Եթե հիվանդը, ով Դիմումի ժամանակամիջոցի ընթացքում ներկայացրել էր պակասավոր Դիմում, արդյունքում ամբողջացնում է Դիմումը հավելյալ տեղեկությունների և/կամ փաստաթղթերի

պահանջին պատասխանելու համար տրված տրամաբանական ժամկետի ընթացքում, ապա հիվանդը կհամարվի ամբողջական Դիմում ներկայացրած անձ, և Կազմակերպությունը տրամաբանական ջանքեր կգործադրի որոշելու՝ արդյո՞ք հիվանդը իրավասու է, միայն այն դեպքում, եթե վերջինս կատարի ամբողջացած Դիմումների վերաբերյալ այս Քաղաքականությամբ պահանջվող մյուս քայլերը:

ix. **Կասկածելի տեղեկություններով Դիմումների համար հակա-չարաշահման կանոն**: Կազմակերպությունը չպետք է կայացնի որոշումներ, որ հիվանդն իրավասու չէ ֆինանսական օգնության համար՝ հիմնվելով տեղեկությունների վրա, որոնք իր համոզումով անվստահելի կամ սխալ են, կամ տեղեկությունների վրա, որոնք հիվանդից ձեռք են բերվել ճնշման տակ կամ հարկադրական գործելակերպերի օգտագործման միջոցով: Հարկադրական գործելակերպը ներառում է արտակարգ իրավիճակի բժշկական խնամքի ուշացումը կամ մերժումը՝ մինչև հիվանդը ներկայացրած լինի պահանջված տեղեկությունները, որպեսզի որոշվի՝ արդյո՞ք հիվանդն ուշացվող կամ մերժվող խնամքի համար իրավասու է ֆինանսական օգնության:

x. **Պակասավոր Դիմումների հետ վարվելը**: Իր ֆինանսական օգնության որոշումները կայացնելիս, Կազմակերպությունը կարող է հաշվի առնել հիվանդի տրամաբանական և անհրաժեշտ տեղեկություններ չներկայացնելը: Այնուամենայնիվ, Կազմակերպությունը տրամաբանորեն կգործի և կկայացնի հնարավորինս լավագույն որոշումը առկա տեղեկություններով:

xi. **Ենթադրական իրավասություն:** Կազմակերպությունը կարող է որոշել, որ հիվանդը ընթացիկ ծառայությունների համար իրավասու է ֆինանսական օգնության, հիմնվելով իր ձեռք բերած կամ գնահատած տեղեկությունների վրա՝ առանց դիմելու հիվանդին, որ տրամադրի բոլոր պահանջված տեղեկությունները սովորական Դիմումի ընթացակարգով կամ անտեսելով այն փաստը, որ հիվանդը չունի առողջական ապահովագրություն: Կազմակերպության որոշումը կարող է ներառել Կազմակերպության կողմից հենվելը նախապես կայացված որոշման, հիվանդի մեկ այլ մատակարարի կողմից տրված տեղեկությունների կամ Կազմակերպության անձնակազմին հասանելի տեղեկությունների ընդհանուր գնահատականի վրա: Նման դեպքերում, Կազմակերպությունը (ա) հիվանդին կտեղեկացնի ենթադրական իրավասության որոշման հիմքի և այն մասին, թե հիվանդը ինչպես կարող է դիմել ավելի առատաձեռն օգնության, որը տրամադրելի է Քաղաքականության ներքո, (բ) հիվանդին կտա հարյուր քսան (120) օր՝ ավելի առատաձեռն օգնության դիմելու համար. և եթե հիվանդը ներկայացնի ամբողջական Դիմում՝ հետամուտ լինելով ավելի առատաձեռն

օգնության, ապա որոշում է՝ արդյո՞ք հիվանդը կարող է ավելի առատաձեռն զեղչի համար իրավասու լինել և արդյո՞ք կատարում է այս Քաղաքականության կողմից պահանջվող մյուս քայլերը՝ լրացված Դիմումների վերաբերյալ: Ինքնավճարով հիվանդները, ովքեր ստանում են Այս Քաղաքականության մեջ նկարագրված զեղչեր, կստանան այդպիսի ծանուցագիր իրենց հաշվետվությունների վրա տպագրված Պարզ լեզվով ամփոփման միջոցով (տեսեք Ա Կցորդը):

xii. **Հիվանդների հրաժարումները Կազմակերպությանը չեն ազատում իրավասությունը որոշելու համար տրամաբանական ջանքերի հանձնառության պարտավորություններից:** Հիվանդից բանավոր կամ գրավոր հրաժարում ստանալը, ինչպես՝ ստորագրված հայտարարությունը, որ հիվանդը չի ցանկանում դիմել օգնություն ստանալու Քաղաքականության ներքո կամ ստանալ այն տեղեկությունները, որոնք պետք է տրամադրվեն հիվանդներին այս Քաղաքականության ներքո, ինքնին չի կարող կազմել որոշում, որ հիվանդը իրավասու չէ և չի բավարարի այն պահանջը, որ տրամաբանական ջանքեր գործադրի որոշելու համար՝ արդյո՞ք հիվանդը իրավասու է նախքան հիվանդի դեմ ECA-ներ ձեռնարկելը:

xiii. **Վճարման ծրագրեր:** Երբ հիվանդը որոշվում է որպես իրավասու ֆինանսական օգնության համար և հաշվեկշիռ է մնում, ապա նա հնարավորություն կունենա վճարելու հերթադրված ժամկետով վճարման ծրագրի միջոցով: Կազմակերպությունը հիվանդի հետ կքննարկի ծրագրային տարբերակները և կմշակի ժամկետով վճարման ծրագրեր, որոնք ընդհանրապես տևում են տասներկու (12) ամսից ավելի և տոկոս չունեն: Հավելյալ մանրամասների համար տեսեք Կազմակերպության պարտքի գանձման քաղաքականությունը:

xiv. **Վեճերի լուծում:** Ֆինանսական օգնություն ստանալու որակավորման վերաբերյալ վեճ ծագելու դեպքում, հիվանդը կարող է գրավոր բողոքարկում ներկայացնել Կազմակերպությանը՝ վերանկատառման համար: Գրավոր բողոքարկումը պետք է բացատրի վեճի հիմնավորումը և ներառի աջակից փաստաթղթեր: Կազմակերպության Հաճախորդների սպասարկման և գործառնությունների վարիչը կամ նրա նշանակած անձը անհապաղ կվերանայի դիմումը և գրավոր որոշում կտա հիվանդին: Այն դեպքում, երբ հիվանդը հավատում է, որ վեճը մնում է առաջին բողոքարկումից հետո, հիվանդը կարող է գրավոր խնդրել մի վերանայում Կազմակերպության փոխնախագահի, Ֆինանսների և գլխավոր եկամտի պարբերաշրջանի պաշտոնյայի կամ նրանց ներկայացուցչի կողմից, ով կքննի և կտա վերջնական գրավոր որոշում:

xv. **Դիմումի տեղեկությունների գաղտնիությունը:** Կազմակերպությունը այս Քաղաքականության ներքո իրավասություն խնդրող հիվանդների կողմից ստացված բոլոր տեղեկությունները կպահպանի որպես գաղտնի տեղեկություններ: Դիմումի և վավերացման գործընթացի ծիրում եկամտին և ունեցվածքներին վերաբերող տեղեկությունները կպահպանվեն գաղտնի մի թղթածրարում, որն անջատ է այն տեղեկություններից, որոնք կարող են օգտագործվել պարտական գումարների գանձման համար:

xvi. **Ժամանակամիջոց Դիմումի լրացման համար («Դիմումի ժամանակամիջոց»):** Հիվանդներին կտրվի երկու հարյուր քառասուն (240) օր՝ Դիմումի լրացման համար: Դիմելու ժամանակամիջոցն սկսվում է այն ամսաթվին, երբ Դիմումի նյութը կազմող խնամքն առաջին անգամ մատուցվել էր (օգտագործելով բուժման վերջին կուրսի սկիզբը, եթե կիրառելի են ծառայության բազմաթիվ ամսաթվեր):

d. **Ժամկետ**

i. Ֆինանսապես որակավորված հիվանդի վավերացման համար սկզբնական ֆինանսական օգնությունը վավեր է վեց (6) ամիս ժամկետով՝ Դիմումի լրացման օրվանից: Իրավասությունը կարող է վերագնահատվել հիվանդի խնդրանքով, սկզբնական վավերացման ժամանակամիջոցի վերջում: Կազմակերպության որոշումով, մի նոր վեց (6) ամսվա վավերացման ժամանակամիջոց կարող է լիազորվել առանց նոր Դիմումի: Տասներկու (12) ամիս անց, մի նոր Դիմում պետք է լրացվի հիվանդի կողմից: Սկսած վերջնական Դիմումի վավերացման ամսաթվից, բաց, որակավորված հաշիվները դուրս են գրվում ֆինանսական օգնության համար՝ հիմնվելով շնորհված օգնության մակարդակի վրա: Առաջ անցնելու հիմունքով, որակավորվող հաշիվները հաջորդ վեց (6) ամիսներին իրավասու կլինեն ֆինանսական օգնության դուրսգրման համար:

e. **Ծանուցագրեր, գրավոր հաղորդակցություններ և հաշվետվություններ**

i. Կազմակերպությունը ֆինանսական օգնության վերաբերյալ տալիս է հետևյալ ծանուցագիրն ու տեղեկությունները՝

a. Այս Քաղաքականությունը:

b. Քաղաքականության պարզ լեզվով ամփոփումը: Պարզ լեզվով ամփոփումը պետք է լինի հստակ, հակիրճ և հեշտ հասկանալի

փաստաթուղթ, որը հիվանդներին և այլ անհատների ծանուցում է, որ Կազմակերպությունը այս Քաղաքականության ներքո առաջարկում է ֆինանսական օգնություն: Պարզ լեզվով ամփոփումը պետք է մշակվի այնպիսի եղանակով, որը պարզում է կարևոր տեղեկություններ, ներառյալ՝ Նահանգային և Դաշնային օրենքներով պահանջված տեղեկությունները, ինչպես՝ իրավասության պահանջմունքները և այս Քաղաքականության ներքո առաջարկվող օգնությունը, մի հակիրճ ամփոփում այս Քաղաքականության ներքո օգնության դիմելու կերպի մասին, և տեղեկություններ՝ հավելյալ տեղեկություններ և օգնություն, ինչպես նաև այլ լեզուներով պատճեններ ձեռք բերելու մասին:

c. Ցանկը Մատակարարների, որոնք կարող են ֆինանսական օգնություն տրամադրելի դարձնել Կազմակերպության հիվանդներին:

d. Դիմումը:

e. Կազմակերպության պարտքի գանձման քաղաքականությունը:

ii. Այս նյութերը տրամադրելի պետք է դարձվեն զանազան եղանակներով, ներառյալ՝

a. **Կայք**: Ֆինանսական օգնության քաղաքականությունը, Ֆինանսական օգնության դիմումը և Ֆինանսական օգնության քաղաքականության պարզ լեզվով ամփոփումը տեղադրվել են Կազմակերպության կայքում՝ cedars-sinai.org/billing-insurance/help-paying-your-bill.html

b. **Էլ. փոստ կամ թղթային պատճեններ**: Այս Քաղաքականության մեջ վկայակոչված բոլոր նյութերի պատճենները կարելի է ձեռք բերել խնդրանք կատարելով Հիվանդների ծառայություններին՝ 323-866-8600 համարով կամ էլ. փոստ ուղարկելով հետևյալին՝ patient.billing@cshs.org

c. **Հրապարակված ազդանշաններ**: Պարզ լեզվով ամփոփումը պետք է հրապարակված լինի հետևյալ վայրերում՝ Շտապ օգնության բաժին, Ընդունման բաժին, Հաշվագրերի բաժին, կենտրոնացված և ապակենտրոնացված գրանցման վայրեր և այլ ամբուլատոր դրվածքներ, ներառյալ՝ հսկման ենթաբաժինները:

iii. **Գրանցում և հաշվագրային ծանուցագրեր:** Հիվանդներին կտրամադրվեն զանազան տեղեկություններ և ծանուցագրեր իրենց գրանցման և հաշվագրերի

հետ կապված հաղորդակցություններում: Օրինակ՝ տեսեք Կազմակերպության պարտքի գանձման քաղաքականությունը:

iv. **Ծանուցում համայնքին:** Կազմակերպությունը զանազան ջանքեր կգործադրի իր Ֆինանսական օգնության ծրագրերը լայնորեն ծանուցելու համար, ինչպես՝ տեղեկությունների ցրումը նպատակային համայնքային կազմակերպություններին կամ համայնքին տեղեկացնելու այլ միջոցներ Կազմակերպության Ֆինանսական օգնության ծրագրերի առկայության մասին:

f. **Թարգմանությունների և բանավոր թարգմանչական ծառայություններ**: Հիվանդների հետ հաղորդակցությունները պետք է ենթարկվեն Կազմակերպության պահանջմունքներին: Առանց վերը նշվածով սահմանափակելու՝ այս Քաղաքականության ներքո ծանուցագրերը, պաշտոնական հաղորդակցությունները և ազդանշանները պետք է լինեն անգլերենով և նահանգային ու դաշնային օրենքներով պահանջվող հավելյալ լեզուներով: Այդ հավելյալ լեզուներն են պարսկերենը, ռուսերենը, իսպաներենը, կորեերենը, հայերենը և չինարենը: Բացի այդ, հիվանդները կարող են Կազմակերպության հետ կապ հաստատել միանալու համար բանավոր թարգմանչական ծառայություններին՝ հաղորդակցման և Քաղաքականությանը վերաբերող փաստաթղթերի այլ լեզուներով կամ Ամերիկյան ժեստերի լեզվով (American Sign Language, ASL) թարգանության համար: Այս փաստաթղթերի պատճենները կարող են նաև տրամադրվել խոշոր տառերով և ձայնագրված՝ Հիվանդների ծառայությունների բաժնից խնդրվելուց հետո:

g. **Բժշկական անհրաժեշտություն/կլինիկական որոշումներ**: Որևէ հիվանդի բժշկական դարմանման համար անհրաժեշտության գնահատումը կհիմնվի կլինիկական դատողության վրա, անկախ՝ ապահովագրական և ֆինանսական կարգավիճակից: Այն դեպքերում, երբ կա արտակարգ իրավիճակի բժշկական վիճակ, ֆինանսական կարգադրությունների որևէ գնահատում տեղի կունենա միայն համապատասխան բժշկական զննական քննությունից և անհրաժեշտ կայունացնող ծառայությունները տրամադրելուց հետո բոլոր կիրառելի նահանգային և դաշնային օրենքներին համաձայն:

h. **Հատուցումներ**: Կազմակերպությունը հիվանդներին կհատուցի գումարների համար, որոնք նրանք վճարել են ըստ այս Քաղաքականության վճարելի գումարից ավելի, ներառյալ՝ որևէ վճարված տոկոս, տարեկան տասը տոկոսի (10%) սակագնով: Եթե հիվանդին վճարելի գումարը նվազ է $5.00-ից (կամ Ներքին եկամտի ծառայության կողմից սահմանված գումարից), Կազմակերպությունը պարտավոր չէ հիվանդին հատուցել կամ տոկոս վճարել: Կազմակերպությունը հիվանդին պետք է հատուցի 30 օրվա ընթացքում:

i. **Գանձումներ**: Գանձման գործողությունների վերաբերյալ հավելյալ տեղեկության համար խնդրում ենք տեսնել Պարտքի գանձման քաղաքականությունը:

j. **Հաշվետվություն**: Կազմակերպությունն այս Քաղաքականությունը կներկայացնի HCAI-ին ամեն երկու տարին մեկ՝ հունվարի 1-ին կամ դրանից առաջ կամ այս Քաղաքականության թարմացման հաջորդող երեսուն (30) օրվա ընթացքում: Եթե նախկինում Քաղաքականությունը ներկայացվելուց հետո նշանակալից փոփոխություններ չեն եղել, Կազմակերպությունը HCAI-ին կծանուցի երեսուն (30) օրվա ընթացքում՝ նախքան Կազմակերպության հաջորդ երկամյա հաշվետվության հունվարի 1-ը: Նշանակալից փոփոխությունները ներառում են որևէ փոփոխություն, որը կարող է ազդել հիվանդի զեղչված վճարման կամ որևէ այլ պաշտպանության վրա, որը շարադրված է դաշնային և նահանգային պահանջմունքների կողմից: Քաղաքականության յուրաքանչյուր ներկայացում HCAI-ին պետք է ներառի վկայագրման հայտարարություն (տես Դ Կցորդը) սուտ վկայության տուգանման ներքո, որը ներառում է հետևյալը՝ (i) Վկայագիր այն մասին, որ ներկայացնողն ունի քաղաքականությունները ներկայացնելու լիազորություն: (ii) Ներկայացված քաղաքականությունները ճշմարիտ և ճշգրիտ պատճեններն են Կազմակերպության քաղաքականությունների:

III. Հիվանդանոցի հաշվագրերի գանգատի ծրագիր: Հիվանդները, ովքեր համոզված են, որ անարդարորեն մերժվել է իրենց ֆինանսական օգնությունը, կարող են գանգատ ներկայացնել Կալիֆորնիա նահանգի Հիվանդանոցի հաշվագրերի գանգատի ծրագրի (Hospital Bill Complaint Program) մոտ: Հավելյալ տեղեկություններ իմանալու կամ գանգատ ներկայացնելու համար գնացեք HCAI-ի կայքը կամ HospitalBillComplaintProgram.hcai.ca.gov:

IV. Հավելյալ օգնություն: Հիվանդների համար, ովքեր օգնության կարիք ունեն իրենց հաշվագրի վճարման համար, կան սպառողների պաշտպանության կազմակերպություններ, որոնք կօգնեն հիվանդներին հասկանալ հաշվագրերի և վճարման գործընթացը: Հավելյալ տեղեկության համար հիվանդները կարող են զանգահարել Առողջապահության սպառողների դաշինք՝ 888-804-3536 համարով կամ այցելել healthconsumer.org կայքը:

V. Տնօրենների խորհրդի կողմից վավերացում և շարունակական վերանայում: Այս Քաղաքականությունը, Պարտքի գանձման քաղաքականությունը և այս քաղաքականությունների բոլոր էական փոփոխությունները պետք է վավերացվեն Կազմակերպության Տնօրենների խորհրդի կողմից: Կազմակերպությունը կանոնավորաբար կվերանայի այս Քաղաքականությունը՝ պարտքի գանձման քաղաքականության հետ մեկտեղ, ինչպես նաև գանձման ջանքերի կարգավիճակը, որպեսզի երաշխավորի, որ դրանք լավագույնս են ծառայում հիվանդներին և համայնքին: Սակայն, այս Քաղաքականության VII Բաժնում պարզաբանված Կցորդների

վարչական փոփոխությունները կարող են ղեկավարության կողմից իրականացվել առանց Խորհրդի վավերացմանը, եթե փոփոխությունները չեն հակասում այս Քաղաքականությանը (օրինակ՝ լեզվական պարզաբանումներ, Քաղաքականության կիրառման գործառնական ընթացակարգը արտացոլող փոփոխություններ, կիրառելի օրենքներում, կանոնակարգերում կամ IRS-ի ցուցումներում փոփոխություններին համապատասխանելու համար թարմացումներ, և թարմացումներ, որոնք արտացոլում են նորագույն Դաշնային աղքատության ցուցումները (Federal Poverty Guidelines):

VI. Սահմանումներ

a. **Ընդհանրապես հաշվագրված գումարներ («AGB»)** նշանակում է այն գումարները, որոնք ընդհանրապես հաշվագրվում են արտակարգ իրավիճակի կամ այլ բժշկականորեն անհրաժեշտ խնամքի համար այն հիվանդներին, ովքեր ունեն այդպիսի խնամքը ծածկող ապահովագրություն, որոշված ըստ 26 C.F.R. §1.501(r)-5(b)-ի: Հավելյալ տեղեկություններ այն մասին, թե ինչպես է Կազմակերպությունը հաշվարկում AGB-ն և AGB-ի տարեկան տոկոսների թարմացումները պետք է սահմանվեն այս Քաղաքականության Գ Կցորդի վրա և կներառվեն Կալիֆորնիա նահանգի Առողջապահության հասանելիության և տեղեկատվության https://syfphr.hcai.ca.gov/ կայքում՝ հանրությանը մատչելի դարձվող փաստաթղթերում:

b. **Դիմում** նշանակում է Կազմակերպության Դիմումը՝ ֆինանսական օգնության համար:

c. **Ունեցվածք** նշանակում է միայն «դրամական ունեցվածքը»: Սա ներառում է հեշտությամբ փողի փոխակերպվող ունեցվածքները, ինչպես՝ դրամատնային հաշիվներն ու հրապարակավ վաճառվող բաժնետոմսերը: Կենսաթոշակային ծրագրերը, տարկետված փոխհատուցման ծրագրերը (և՛ որակավորվող, և՛ չորակավորվող IRS-ի օրենսգրքի ներքո) հաշվի չեն առնվի: Հետևյալները բացառվում են Ունեցվածքներից՝ հիվանդի դրամական ունեցվածքի առաջին տասը հազար դոլարը ($10,000) և հիվանդի դրամական ունեցվածքի հիսուն տոկոսը (50%) առաջին տասը հազար դոլարի նկատմամբ ($10,000):

d. **Համայնքային գործընկերներ** նշանակում է աջակից հարաբերություններ համայնքային այլ գործակալությունների հետ, օրինակները ներառում են՝ Planned Parenthood-ը կամ Saban Community Clinic-ը:

e. **Ապրուստի կենսական ծախսեր** նշանակում է ծախսեր հետևյալներից որևէ մեկի համար՝ վարձավճար կամ տան համար վճարում և պահպանում, սնունդ և տնային պաշարներ, կենցաղսպասարկություն և հեռախոս, հագուստ, բժշկական և ատամնաբուժական վճարումներ, ապահովագրություն, դպրոց կամ երեխայի խնամք,

երեխայի կամ կողակցի աջակցություն, փոխադրում և ավտոմեքենայի ծախսեր, այդ թվում՝ ապահովագրություն, գազ և վերանորոգում, տեղադրման վճարումներ, լվացք և մաքրություն, և այլ արտակարգ ծախսեր:

f. **Արտակարգ գանձման գործողություններ («ECA»)** նշանակում է գանձման գործողություններ, որոնք Կազմակերպությունը չի ձեռնարկի նախքան տրամաբանական ջանքեր գործադրելը, որոշելու համար՝ արդյո՞ք հիվանդը իրավասու է ֆինանսական օգնության համար այս Քաղաքականության ներքո: ECA-ները հատուկ նկարագրվել են Պարտքի գանձման Քաղաքականության մեջ:

g. **Ընտանիք** նշանակում է հետևյալը՝ (1) 18 տարին բոլորած և ավելի բարձր տարիքի անձանց համար՝ կողակից, տնային զուգընկեր և 21 տարին չբոլորած երեխաներ՝ անկախ տանը բնակվելուց կամ չբնակվելուց, 2) 18 տարին չբոլորած անձանց համար՝ ծնող, խնամակալ ազգականներ և ծնողի կամ խնամակալ ազգականի 21 տարին չբոլորած այլ երեխաներ:

h. **Աղքատության դաշնային մակարդակ** (“FPL”) նշանակում է այն չափորոշիչը, որն օգտագործվում է Միացյալ Նահանգներում աղքատությունը որոշելու համար և պարբերաբար հրապարակվում է Առողջապահության և Մարդու ծառայությունների նախարարության (Department of Health and Human Services, DHHS) կողմից իրենց կայքում՝ https://aspe.hhs.gov/topics/poverty-economic-mobility/poverty-guidelines:

i. **Ֆինանսապես որակավորված հիվանդ** նշանակում է մի հիվանդ, ով ֆինանսական օգնություն է խնդրել Կազմակերպությունից և լրացրել և ներկայացրել է Դիմում: Դիմումի վերանայումը ցույց է տալիս, որ հիվանդը իրավասու է ֆինանսական օգնության համար և Դիմումը վավերացվել է ըստ այս Քաղաքականության, կամ Կազմակերպությունը որոշել է, որ հիվանդն այս Քաղաքականության ներքո ենթադրաբար իրավասու է Ֆինանսական օգնության համար:

j. **Ֆինանսական օգնություն** նշանակում է կարգադրություններ այս Քաղաքականության ներքո՝ առողջական խնամքի ծառայությունների համար, որոնք հիվանդին պետք է մատուցվեն անվճար կամ նվազեցված ծախսով: Նվազեցված ծախսերն ընդհանրապես իրականացվում են ըստ վճարման ծրագրի կամ՝ Ինքնավճարով հիվանդների համար ինքնաբերական զեղչի:

k. **Բարձր բժշկական ծախսեր** նշանակում է գրպանից վճարվող տարեկան ծախսերն այն հիվանդների, որոնց ընտանեկան եկամուտը գերազանցում է ֆինանսական օգնության համար Կազմակերպության շեմը: Այս ծախսերը հաշվի են առնվում, եթե դրանք՝ (i) կա՛մ

հիվանդի կողմից առաջացել են Կազմակերպության հիվանդանոցում և գերազանցում են հիվանդի ընթացիկ ընտանեկան եկամուտը կամ նախորդ տասներկու (12) ամիսների ընտանեկան եկամուտը, կամ (ii) գրպանից վճարվող բժշկական ծախսեր, որոնք գերազանցում են հիվանդի ընտանեկան եկամտի տաս տոկոսը (10%), եթե հիվանդը փաստաթղթեր է ներկայացնում հիվանդի բժշկական ծախսերի վերաբերյալ, որոնք վճարվել են հիվանդի կամ հիվանդի ընտանիքի կողմից նախորդ տասներկու (12) ամիսներին:

l. **Բժշկական կարիք** նշանակում է մի հիվանդ, ով չի կարող վճարել ծառայությունների դիմաց՝ անսպասելի բարձր ծախսերով խնամքի պատճառով, բայց ով չի որակավորվում այս Քաղաքականության ներքո ֆինանսական օգնության համար:

m. **Բժշկականորեն անհրաժեշտ** նշանակում է իրականացված առողջապահական ծառայություններ, որոնք անհրաժեշտ են և կլինիկականորեն պատշաճ՝ հիվանդին գնահատելու, ախտորոշելու կամ բուժելու համար՝ համաձայն բժշկական գործառության ընդհանուր ընդունված չափանիշներին և հիմնականում հիվանդի կամ մատակարարի հարմարության համար չեն:

n. **Վճարման ծրագիր** նշանակում է համաձայնություն՝ Կազմակերպության և հիվանդի միջև, որով Կազմակերպությունը առաջարկել և հիվանդը ընդունել է իր պարտքը վճարել ամսական վճարումներով, որոնք չեն գերազանցում հիվանդի ընտանիքի եկամտի 10%-ը տվյալ ամսում, բացառելով ապրուստի կենսական ծախսերի հանուրդները:

VII. Հղումներ: Այս Քաղաքականության մշակման ընթացքում վկայակոչված նահանգային և դաշնային օրենքները ներառում են, սակայն առանց դրանցով սահմանափակվելու՝

a. ԱՄՆ Ներքին եկամտի օրենսգրքի (Internal Revenue Code) 501(r)(3) Բաժինը:

b. Կալիֆորնիայի Առողջապահության և անվտանգության օրենսգրքի (California Health & Safety Code) 127400-127462 Բաժինը (Հիվանդանոցների արդար գնանշանակման քաղաքականություններ և Արտակարգ իրավիճակի բժիշկների արդար գնանշանակման քաղաքականություններ):

c. Կալիֆորնիայի ասամբլեայի 1020 օրինագիծը՝ Առողջական խնամքի պարտք և արդար հաշվագրում:

d. Կալիֆորնիայի ասամբլեայի 532 օրինագիծը՝ Արդար հաշվագրման քաղաքականություններ:

e. Առողջապահության և մարդու ծառայությունների բաժնի (Department of Health and Human Services) Ընդհանուր քննչի գրասենյակի («OIG») ուղեցույց՝ չապահովագրված և թերապահովագրված հիվանդներին ֆինանսական օգնության և IRS-ի կանոնակարգերի վերաբերյալ:

f. Վերոնշյալներից որևէ մեկի վերաբերյալ որևէ գործադրելի կանոնակարգ և գործակալության ուղեցույց:

VIII. ԿՑՈՐԴՆԵՐԻ ՑԱՆԿ

A. Ֆինանսական օգնության քաղաքականության ամփոփում – Պարզ լեզվով ամփոփում

B. Ֆինանսական օգնության զեղչ

C. Ընդհանրապես հաշվագրված գումարները

D. Վկայագրման հայտարարություն

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ՝

ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀԱՐՑԸ՝ 05/01/03

ԱՊԱՀՈՎԱԳՐԻ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԳՈՐԾՈՒՆ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 01.01.2024

ՎԵՐՋԻՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ՝ 15.04.2023

Ա Կցորդ
Summary of Financial Assistance Policy – Plain Language SummaryՖինանսական օգնության քաղաքականության ամփոփում – Պարզ լեզվով ամփոփում

Մեր առաքելության ծիրում, Cedars-Sinai Medical Center-ը, Cedars-Sinai Marina del Rey Hospital-ը և Cedars-Sinai Medical Care Foundation-ը («Կազմակերպություն») պարտավորվում են որակյալառողջապահությունը մատչելի դարձնել համայնքի համար և արժանապատվությամբ, կարեկցանքով և հարգանքով վարվել մեր բոլոր հիվանդների հետ: Սա ներառում է անվճար կամ զգալիորեն զեղչված գներով ծառայությունների մատուցում իրավասու հիվանդներին, ովքեր չեն կարող վճարել խնամքի համար, ինչպես նախատեսված է մեր ֆինանսական օգնության քաղաքականության մեջ («Քաղաքականություն»): Մենք նաև մեր հիվանդներին առաջարկում ենք զանազան տարբերակներ՝ նրանց ֆինանսական կարիքները բավարարելու համար, նույնիսկ եթե նրանք չեն որակավորվում օգնության համար: Այս փաստաթուղթը պարզ լեզվով ամփոփումն է («Ամփոփում») մեր քաղաքականության:

Օգնություն ձեր հաշվագրի վճարման համար

Ֆինանսական օգնություն հասանելի կդարձվի այն հիվանդներին, ովքեր ստանում են բժշկականորեն անհրաժեշտ բուժգործողություններ և որոնց եկամուտն ու դրամական ունեցվածքները (միասնաբար՝ «եկամուտ») ցածր են ընթացիկ տարվա Աղքատության դաշնային մակարդակի (FPL) 400%-ից կամ հավասար են դրան: Հիվանդներ, որոնց եկամուտը տատանվում է FPL-ի 401%-600%-ի սահմաններում, նույնպես որակավորվում են զեղչված խնամքի համար: Հիվանդներին հասանելի զեղչերը կլինեն համեմատական սանդղակով, որը հիմնված է ընտանիքի չափի, եկամտի մակարդակի և ապահովագրական կարգավիճակի վրա: Ընտրովի կամ բժշկականորեն ոչ անհրաժեշտ բուժգործողությունների կամ դուրս գրվելուց հետո հետևման խնամքի համար ֆինանսական օգնությունը սահմանափակվում է այն հիվանդներով, ովքեր ապրում են Կազմակերպության սպասարկման տարածքում և ունեն նախնական վավերացում Փոխնախագահի, Ֆինանսների և գլխավոր եկամտի պարբերաշրջանի պաշտոնյայի կամ նրանց նշանակած անձի կողմից: Եթե հիվանդը լիովին չի որակավորվում անվճար ծառայությունների համար, սակայն իրավասու է զեղչ ստանալու Քաղաքականության ներքո, հիվանդից չի գանձվի ավելի շատ, քան Կազմակերպության կողմից ընդհանուր առմամբ գանձվում է շտապ օգնության կամ այլ բժշկականորեն անհրաժեշտ խնամքի համար:

Բժիշկներ և ծառայություններ

Քաղաքականությունը կիրառելի է միայն Կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների համար և հետևյալների կողմից՝

- Cedars-Sinai ֆակուլտետի բժիշկները, ովքեր գործում են որպես ֆակուլտետի անդամ:
- Cedars-Sinai Medical Care Foundation-ի («CSMCF») կողմից աշխատանքի ընդունված բժիշկները, կամ բժշկական խմբերը, որոնք ունեն մասնագիտական ծառայությունների բացարձակ համաձայնություն CSMCF-ի հետ:
- Community Urgent Care Medical Group, Inc.-ի՝ Cedars-Sinai-ի արտակարգ իրավիճակների բժիշկները:

Ինչպես դիմել

Քաղաքականության ներքո անվճար կամ զեղչով խնամքի հետամուտ հիվանդները պետք է լրացնեն ֆինանսական օգնության դիմումը («Դիմում») և ներկայացնեն որևէ պահանջվող փաստաթուղթ: Դիմումը և փաստաթղթերը Կազմակերպության կողմից կանցնեն վերանայման գործընթաց:

Այս Ամփոփումի, Քաղաքականության կամ Դիմումի անվճար պատճենները հասանելի են անգլերեն, պարսկերեն, ռուսերեն, հայերեն, չինարեն, կորեերեն կամ իսպաներեն լեզուներով: Պատճեններ խնդրելու կամ հավելյալ տեղեկություններ ստանալու համար, ներառյալ ֆինանսական օգնության գործընթացի վերաբերյալ հարցերը, կարող եք՝

- Հարցնել գրանցման կամ ընդունման գրասեղանների ներկայացուցիչներին:
- Զանգահարեք Հիվանդների ծառայություններ 323-866-8600 համարով:
- Այցելեք Կազմակերպության կայքը՝ cedars-sinai.org/billing-insurance/help-paying-your-bill.html

Եթե ունեք հաշմանդամություն և վերոհիշյալ նյութերի համար ձեզ անհրաժեշտ է մատչելի այլընտրական ձևաչափ, կամ եթե խոսում եք թվարկվածներից տարբեր լեզվով, խնդրում ենք կապ հաստատել Հիվանդների ծառայությունների հետ և նրանք կարող են ձեզ տրամադրել այլընտրական ձևաչափ կամ ձեզ հետ կապ հաստատել մեր Բանավոր թարգմանչական ծառայությունների բաժնի հետ՝ հետագա օգնության համար:

Կարգադրություններ ինքնավճարի համար
Քաղաքականության ներքո անվճար կամ զեղչված խնամքի համար չորակավորվող հիվանդները կարող են օգտակար գտնել Կազմակերպության այլ ծրագրեր: Ապահովագրությունից զուրկ հիվանդները կարող են ստանալ զգալի զեղչ, որը նման է այն զեղչերին, որոնք տրամադրում ենք կառավարվող խնամքի ապահովագրության ծրագրերին՝ իրավասու ծառայությունների համար:

Կանոնակարգային ծանուցագիր գանձումների համար
Որոշ ժամկետանց հաշիվներ մենք ուղղորդում ենք երրորդ կողմի գանձման գործակալություններին: Այս գործակալությունները պետք է հետևեն Կալիֆորնիայի և դաշնային բոլոր օրենքներին, ինչպես նաև համապատասխանեն Կազմակերպության քաղաքականության և ընթացակարգերին: Պարտքերի գանձման գործունեությունների մասին հավելյալ տեղեկությունների համար կարող եք կապ հաստատել Առևտրի դաշնային հանձնաժողովի (Federal Trade Commission) հետ հեռախոսով՝ 877-FTC-HELP (877-382-4357) համարով: Այն դեպքում, երբ ձեր հաշիվը ուղարկվում է գանձման գործակալություն և դուք խնդիրներ եք ունենում, օգնության համար կապ հաստատեք մեր Հիվանդների ծառայությունների հետ 323-866-8600 համարով:

Պաշտպանություններ անակնկալ բժշկական հաշվագրերի դեմ
Բոլոր հիվանդներին ընձեռվում են պաշտպանություններ անակնկալ բժշկական հաշվագրերի դեմ: Խնդրում ենք տեսնել «Ծանուցագիր հիվանդներին - Ձեր իրավունքները և պաշտպանությունները անակնկալ բժշկական հաշվագրերի դեմ» նյութը մեր կայքում՝ cedars-sinai.org/patients-visitors/resources/patient-rights.html կամ խնդրել պատճենը:

Հիվանդանոցի հաշվագրերի գանգատի ծրագիր
Եթե համոզված եք, որ անարդարորեն մերժել են ձեր ֆինանսական օգնությունը, կարող եք գանգատ ներկայացնել Կալիֆորնիա նահանգի Հիվանդանոցի հաշվագրերի գանգատի ծրագրի (Hospital Bill Complaint Program) մոտ: Հավելյալ տեղեկության և գանգատ ներկայացնելու համար այցելեք HospitalBillComplaintProgram.hcai.ca.gov կայքը:

Հավելյալ օգնություն
Օգնություն ձեր հաշվագրի վճարման համար – Կան սպառողների պաշտպանության կազմակերպություններ, որոնք կօգնեն ձեզ հասկանալ հաշվագրերի և վճարման գործընթացը: Հավելյալ տեղեկության համար կարող եք զանգահարել Առողջապահության սպառողների դաշինք՝ 888-804-3536 համարով կամ այցելել healthconsumer.org կայքը:

Հավելյալ աղբյուրներ և տեղեկություններ՝
- Հիվանդները կարող են իրավասու լինել կառավարական օգնության ծրագրերի, ինչպես՝ Medi-Cal-ը կամ դրամական օժանդակությամբ ծածկույթը Covered California-ի միջոցով: Հիվանդների ֆինանսական պաշտպանի (Patient Financial Advocate, «PFA») գրասենյակն ունի տեղում անձնակազմ՝ հիվանդների հարցերին պատասխանելու և այս ծրագրերին դիմելու կապակցությամբ օգնելու համար: PFA-ի գրասենյակի հետ կարելի է շփվել 310-423-5071 համարով կամ այս հասցեով՝ 8700 Beverly Blvd., South Tower, Room 1740, Los Angeles, CA 90048:
- Կոմերցիոն առողջական ապահովագրության վերաբերյալ հարցերի համար, զանգահարեք 1-800-CEDARS1 կամ 800 800-233-2771 համարով:
- Կազմակերպության գների և գնման ենթակա ծառայությունների գործիքի մասին տեղեկությունների համար այցելեք այս կայքը՝ cedars-sinai.org/billing-insurance.html

Ա Կցորդ (շարունակված)

Ֆինանսական օգնության կարգախոսային թերթիկ

English: ATTENTION: If you need help in your language, call 323-866-8600 or visit the PFA office, 8 a.m.–4:30 p.m., Monday through Friday, at 8700 Beverly Blvd., South Tower, Room 1740, Los Angeles, CA 90048. Aids and services for people with disabilities, like documents in large print or audio are also available. These services are free.

Spanish: ATENCIÓN: Si necesita ayuda en su idioma, llame al 323-866-8600 o visite la oficina de PFA, de 08:00 a. m. a 04:30 p. m., de lunes a viernes, en 8700 Beverly Blvd., South Tower, Room 1740, Los Angeles, CA 90048. También hay ayuda y servicios disponibles para personas con discapacidades, como documentos con letra grande o en audio. Estos servicios son gratuitos.

Chinese-Simplified: 注意：如果您需要以您的语言获得帮助，请致电 323-866-8600 或造访 PFA 办公室，服务时间为周一至周五上午 8:00 至下午 4:30，地址为 8700 Beverly Blvd., South Tower, Room 1740, Los Angeles, CA 90048。我们还为残障人士提供援助和服务，例如大字体文件或音频。这些服务均为免费。

Vietnamese: CHÚ Ý: Nếu quý vị cần trợ giúp bằng ngôn ngữ của mình, vui lòng gọi 323-866-8600 hoặc đến tại văn phòng PFA, 8 sáng – 4:30 chiều, Thứ Hai đến Thứ Sáu, tại địa chỉ 8700 Beverly Blvd., South Tower, Room 1740, Los Angeles, CA 90048. Các trợ cụ và dịch vụ dành cho người khuyết tật, chẳng hạn như tài liệu ở dạng chữ in khổ lớn hoặc tệp âm thanh cũng có sẵn. Các dịch vụ này được miễn phí.

Tagalog: PAUNAWA: Kung kailangan mo ng tulong sa iyong wika, tumawag sa 323-866-8600 o bisitahin ang tanggapan ng PFA, 8 a.m.-4:30 p.m., Lunes hanggang Biyernes, sa 8700 Beverly Blvd., South Tower, Room 1740, Los Angeles, CA 90048. Available din ang mga tulong at serbisyo para sa mga taong may kapansanan, tulad ng mga dokumentong nakasulat sa malalaking titik o naka-audio. Ang mga serbisyong ito ay walang bayad.

Korean: 참고 사항: 귀하의 언어로 도움이 필요하시면 월요일부터 금요일 오전 8시~오후 4시 30분에 전화 323-866-8600번으로 연락하시거나 PFA 사무실을 방문해 주십시오. 주소는 8700 Beverly Blvd., South Tower, Room 1740, Los Angeles, CA 90048입니다. 큰 활자 또는 오디오 문서 등 장애인을 위한 지원 및 서비스도 제공됩니다. 해당 서비스는 무료입니다.

Armenian: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Եթե օգնության կարիք ունեք ձեր լեզվով, զանգահարեք 323-866-8600 հեռախոսահամարով կամ այցելեք PFA-ի գրասենյակը, 8:00-ից-16:30, երկուշաբթիից ուրբաթ, այս հասցեով՝ 8700 Beverly Blvd., South Tower, Room 1740, Los Angeles, CA 90048: Հաշմանդամների համար տրամադրելի են նաև օգնություններ և ծառայություններ, օրինակ՝ խոշոր տպատառերով փաստաթղթեր կամ ձայնագրված նյութեր: Այս ծառայություններն անվճար են:

Farsi: توجه: اگر نیاز به کمک به زبان خود دارید، با 323-866-8600 تماس بگیرید یا در روزهای دوشنبه تا جمعه از ساعت 8 صبح تا 4:30 عصر به دفتر PFA به نشانی 8700 Beverly Blvd., South Tower, Room 1740, Los Angeles, CA 90048 مراجعه کنید. کمک‌ها و خدماتی، مانند اسناد با چاپ درشت یا در قالب صوتی، نیز برای افراد دارای معلولیت در دسترس است. این خدمات رایگان هستند.

Russian: ВНИМАНИЕ: если вам нужна помощь на русском языке, позвоните по номеру 323-866-8600 или посетите отдел помощи пациентам по финансовым вопросам (PFA) по адресу 8700 Beverly Blvd., South Tower, Room 1740, Los Angeles, CA 90048. График работы отдела: с понедельника по пятницу с 08:00 до 16:30. Лицам с ограниченными возможностями бесплатно предоставляются вспомогательные средства и услуги, например документы, напечатанные крупным шрифтом, или в аудиоформате.

Japanese: 注意事項：言語サポートが必要な場合は、323-866-8600までお電話いただくか、PFA事務所 (8700 Beverly Blvd., South Tower, Room 1740, Los Angeles, CA 90048) までお越しください。月曜日から金曜日の午前 8 時から午後 4 時 30 分までです。大きな活字の文書や音声など、障害のある人向けの支援やサービスもご利用いただけます。これらのサービスは無料です。

Arabic: تنبيه: إذا كنت بحاجة إلى مساعدة بلغتك، يرجى الاتصال بالرقم 323-866-8600 أو تفضّل بزيارة مكتب المحامي المالي للمرضى (PFA)، من الساعة 8 صباحًا حتى 4:30 مساءً، من الاثنين إلى الجمعة، في العنوان التالي: 8700 Beverly Blvd., South Tower, Room 1740, Los Angeles, CA 90048. تتوفر أيضًا مساعدات وخدمات لذوي الإعاقة، مثل المستندات المطبوعة بحروف كبيرة أو الملفات الصوتية. هذه الخدمات مجانية.

Punjabi: ਧਿਆਨ ਦਿਓ: ਜੇਕਰ ਤੁਹਾਨੂੰ ਆਪਣੀ ਭਾਸ਼ਾ ਵਿੱਚ ਸਹਾਇਤਾ ਦੀ ਲੋੜ ਹੈ, ਤਾਂ 323-866-8600 'ਤੇ ਕਾਲ ਕਰੋ ਜਾਂ 8700 Beverly Blvd., South Tower, Room 1740, Los Angeles, CA 90048 ਵਿਖੇ PFA ਦਫ਼ਤਰ ਵਿੱਚ, ਸਵੇਰੇ 8 ਵਜੇ ਤੋਂ ਸ਼ਾਮ 4:30 ਵਜੇ, ਸੋਮਵਾਰ ਤੋਂ ਸ਼ੁੱਕਰਵਾਰ ਜਾਓ। ਅਪਾਹਜ ਲੋਕਾਂ ਲਈ ਸਹਾਇਤਾ ਅਤੇ ਸੇਵਾਵਾਂ, ਜਿਵੇਂ ਕਿ ਵੱਡੇ ਪ੍ਰਿੰਟ ਵਿੱਚ ਦਸਤਾਵੇਜ਼ ਜਾਂ ਆਡੀਓ ਵੀ ਉਪਲਬਧ ਹਨ। ਇਹ ਸੇਵਾਵਾਂ ਮੁਫ਼ਤ ਹਨ।

Mon-Khmer Cambodian: យកចិត្តទុកដាក់៖ ប្រសិនបើអ្នកត្រូវការជំនួយជាភាសារបស់អ្នក សូមហៅទូរសព្ទទៅលេខ 323-866-8600 ឬទៅការិយាល័យទីប្រឹក្សាអ្នកជំងឺ និងគ្រួសារ។ (PFA) ចាប់ពីម៉ោង 8 ព្រឹកដល់ម៉ោង 4:30 នាទីរសៀល ពីថ្ងៃចន្ទដល់ថ្ងៃសុក្រនៅ 8700 Beverly Blvd., South Tower, Room 1740, Los Angeles, CA 90048។ ក៏មាន ជំនួយ និងសេវាកម្មសម្រាប់អ្នកដែលមានពិការភាព ដូចជាឯកសារដែលបោះពុម្ពជាអក្សរធំ ឬអូឌីយ៉ូផងដែរ។ សេវាកម្មទាំងនេះគឺឥតគិតថ្លៃ។

Hmong: DAIM NTAWV CEEB TOOM: Yog tias koj xav tau kev pab ua koj hom lus, hu rau 323-866-8600 los sis mus ntsib lub chaw hauj lwm PFA tau, thaum 8 teev sawv ntxov-4:30 teev tsaus ntuj, hnub Monday txog hnub Friday, ntawm 8700 Beverly Blvd., South Tower, Room 1740, Los Angeles, CA 90048. Dhau ntawv lawm kuj tseem muaj kev pab cuam thiab cov cuab yeej pab rau cov neeg uas muaj kev xiam oob qhab, xws li cov ntawv luam ua tus ntawv loj los sis muaj kaw ua suab lus thiab. Cov kev pab cuam no yog pab dawb.

Hindi: ध्यान दें: यदि आपको अपनी भाषा में सहायता चाहिए, तो 323-866-8600 पर कॉल करें या PFA कार्यालय, सुबह 8 बजे से शाम 4:30 बजे, सोमवार से शुक्रवार, 8700 Beverly Blvd., South Tower, Room 1740, Los Angeles, CA 90048 पर जाएँ। विकलांग लोगों के लिए सहायता और सेवाएँ, जैसे बड़े प्रिंट में दस्तावेज़ या ऑडियो भी उपलब्ध हैं। ये सेवाएँ मुफ़्त हैं।

Thai: ข้อควรทราบ: หากคุณต้องการความช่วยเหลือด้านภาษา โปรดโทร 323-866-8600 หรือไปที่สำนักงาน PFA เวลา 8.00-16.30 น. วันจันทร์ถึงวันศุกร์ที่ 8700 Beverly Blvd., South Tower, Room 1740, Los Angeles, CA 90048 มีบริการช่วยเหลือและบริการสำหรับคนพิการ เช่น บริการเอกสารแบบพิมพ์ขนาดใหญ่หรือบริการเสียงก็มีให้เช่นกัน บริการเหล่านี้ไม่มีค่าใช้จ่าย

Բ Կցորդ

Financial Assistance DiscountՖինանսական օգնության զեղչ

Դաշնային աղքատության ցուցումներ

Չապահովագրված զեղչ	100%	95%	90%	85%	85%
Թերապահովագրված զեղչ	100%	90%	80%	70%	60%

Ընտանեկան միավորի չափը	**FPL Տարեկան աշխատավարձ**					
1	$14,580	$58,320	$65,610	$72,900	$80,190	$87,480
2	$19,720	$78,880	$88,740	$98,600	$108,460	$118,320
3	$24,860	$99,440	$111,870	$124,300	$136,730	$149,160
4	$30,000	$120,000	$135,000	$150,000	$165,000	$180,000
5	$35,140	$140,560	$158,130	$175,700	$193,270	$210,840
6	$40,280	$161,120	$181,260	$201,400	$221,540	$241,680
7	$45,420	$181,680	$204,390	$227,100	$249,810	$272,520
8	$50,560	$202,240	$227,520	$252,800	$278,080	$303,360
Յուրաքանչյուր հավելյալ անձի համար ավելացրեք	$5,140					
		400 %	450 %	500 %	550 %	600 %

Նշում՝ Ցուցակի վերջին վերամշակումը՝ 1/16/2023 թ.

Գ Կցորդ

Amounts Generally BilledԸնդհանրապես հաշվագրված գումարներ

Ընդհանրապես հաշվագրված գումարները («AGB») նշանակում է այն գումարները, որոնք ընդհանրապես հաշվագրվում են արտակարգ իրավիճակի կամ այլ բժշկականորեն անհրաժեշտ խնամքի համար այն հիվանդներին, ովքեր ունեն այդպիսի խնամքը ծածկող ապահովագրություն, որոշված ըստ 26 C.F.R. § 1.501(r)-5(b)-ի:

Կազմակերպությունը կօգտագործի հետահայաց մեթոդը՝ որոշելու համար առավելագույն գումարը, որը կհաշվագրվի իրավասու ստացիոնար հիվանդին՝ օգտագործելով Medicare-ի և առևտրական ստացիոնար հիվանդի փոխհատուցման միջին սակը: Իրավասու ստացիոնար հիվանդին առավել ևս օգտակար լինելու համար, Կազմակերպությունը կօգտագործի AGB-ի կամ Medicare MS-DRG-ի փոխհատուցման ավելի ցածր գումարը խնամքի այս դրվագի համար՝ իրավասու հիվանդի պատասխանատվությունը որոշելիս:

Կազմակերպությունը կօգտագործի հետահայաց մեթոդը՝ որոշելու համար առավելագույն գումարը, որը կհաշվագրվի իրավասու ամբուլատորային հիվանդին՝ օգտագործելով Medicare-ի և առևտրական ամբուլատորային հիվանդի փոխհատուցման միջին սակը:

Կազմակերպությունը կօգտագործի հետահայաց մեթոդը՝ որոշելու համար առավելագույն գումարը, որը կհաշվագրվի իրավասու շտապ օգնության սենյակային հիվանդին՝ օգտագործելով Medicare-ի և առևտրական շտապ օգնության սենյակների փոխհատուցման միջին սակը: Ստացիոնար, ամբուլատոր և շտապ օգնության սենյակի փոխհատուցման սակերը հաշվարկվում են առնվազն տարեկան դրությամբ՝ օգտագործելով անցած 12 ամիսների ընթացքում Medicare-ի ամենավերջին փակված հաշիվները:

	Չապահովագրված ինքնավճարային զեղչեր	**AGB-ի փոխհատուցման %**
Cedars-Sinai Medical Center		
Շտապ օգնության սենյակ	84 %	16 %
Ստացիոնար	86 %	14 %
Ամբուլատոր	84 %	16 %
Cedars-Sinai Marina del Rey Hospital		
Շտապ օգնության սենյակ	78 %	22 %
Ստացիոնար	84 %	16 %
Ամբուլատոր	83 %	17 %

Նշում 1՝ Գործուն այս ամսաթվից՝ 01/01/2024
Նշում 2՝ Տոկոսները կլորացվում են աղյուսակային ցուցադրության նպատակներով:

Դ Կցորդ

Վկայագրման հայտարարություն

Այս Քաղաքականությունն ու իր կցորդները կներկայացվեն Առողջապահության հասանելիության և տեղեկատվության բաժնին (HCAI): Բացի այդ, այն հասանելի կդառնա Կազմակերպության կայքից:

Կազմակերպությունը սուտ վկայության տուգանման ներքո կվկայի հետևյալի մասին՝

1. Քաղաքականությունը ներկայացնող անհատը պատշաճորեն լիազորված է քաղաքականությունը ներկայացնել Կազմակերպության անունից:

2. Ներկայացված քաղաքականությունը ճշմարիտ և ճշգրիտ պատճեն է, որի համար կցված է այս վկայագրությունը:

Lisa Maqueira
Vice President, Finance and Chief Revenue Cycle Officer

11/30/23
Date